Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.

Իշխանութեամբն ամենայն հայոց Հայրախնամ, Մաղաքիայ. ○

Միքայէլ իշխան, ○
Մանուէլ Գծագիր. ○

Սեղբեստրոս արք Եպիսկոպոս, Երկրորդ տանուտէր Հայոց: ○

Օրինակ նամակի Պաւսօն երրորդ տանուտէրութեան։

## ԳԼՈՒԽ ԽԲ.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան յաշխարհէն տուրութերնոյ, և թուղթ փոխանորդութեան իւրեանց ընդ ձեզ գալստանիդ գեղջէն կազզվանու, և մարտիրոսիդ գեղջէն մալաշակերտու, ըստ Օրինացն կարգադրութեանն հայոց 'ի միջոցէ ձերմէ մեք ընկալաք գալստանդ կազզվանու եղբայրակից մեր հաւատարիմ տանն հայոց, և 'ի վերայ երդման և արժանաւորութեան քոյ տուաք քեզ Նամակ Շնորհաց և պաշտօն 'ի տանուտէրութեան ժամանակաւ երիս ամաւ մինչ տանն հայոց, զի դու Տեառն գալըստանդ կազզվանու նստցիս 'ի չորրորդ աթոռ տանուտէրութեան 'ի բարձրագահ և բարեվարք տանն հայոց, և ունիս իշխանութիւն զի տանուտէրամբ հանդերձ տացցես իշխանութիւն ամենայն պաշտօնի նամակօք, ամենայն պաշտօնատարաց զի եկանեն իւրաքանչիւր 'ի գործ, և ունիս իշխանու-